# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

## ՀՀԳՄՎՀ ԳՀԾՁԲ 21/3 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման նիստի

Վարսերի համայնքապետարան «04» օգոստոսի 2021թ.
ժամը 10:00

Մասնակցում էին հանձնաժողովի՝
նախագահ Ս. Հակոբյանը,
անդամներ՝ Հ. Աբրահամյանը,
Լ. Մխեյանը,
Ն. Պողոսյանը
Քարտուղար՝ Լ. Արզումանյանը

### ՕՐԱԿԱՐԳՈՒՄ

**ՀՀԳՄՎՀ ԳՀԾՁԲ 21/3 ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացման և գնահատման մասին**

1. *Հայտերի բացման վայրի, օրվա և ժամվա մասին*

ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարսերի համայնքապետարանի կարիքների համար հայտարարված ՀՀԳՄՎՀ ԳՀԾՁԲ 21/3 ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացումը տեղի ունեցավ ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարսեր համայնքի 7 փ. 2. 11 հասցեում, 04.08.2021 թ., ժամը 10:00-ին:

ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարսեր համայնքի ճանապարհների վերանորոգման աշխատանքների կատարման որակի տեխնիկական հսկողության ծառայությունների համար նախատեսված են ֆինանսական միջոցների մի մասը, գնումն իրականացվում է <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն:

2. **Հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.**

ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարսերի համայնքապետարանի կարիքների համար հայտարարված ՀՀԳՄՎՀ ԳՀԾՁԲ 21/3 ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

| N | Մասնակցի անվանումը | Գտնվելու վայրը | Կապի միջոցը էլ.փոստ, հեռ.համար |
|---|---|---|---|
| 1 | <<ՄԱՌՔ>> ՍՊԸ | Ք. Երևան Պ. Սևակի փող. 1 | հեռ. 044 43 80 42<br>էլ փոստ marq.htg@mail.ru |

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ - 0:

3. Տվյալներ ծրարը կազմելու և ներկայացնելու՝ սահմանված կարգի պահանջների համապատասխանության մասին.

Մասնակցի կողմից ներկայացված ծրարը կազմված և ներկայացված է գնման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ - 0:

**4. Տվյալներ բացված յուրաքանչյուր ծրարում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.**

Մասնակցի կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը: Բոլոր ներկայացված փաստաթղթերը կազմվել են բնօրինակից և 1 օրինակ պատճեններից:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ - 0:

**5. Տվյալներ մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերի՝ հրավերով սահմանված պահանջներին համապատասխան կազմված լինելու մասին.**

Մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ - 0:

**6. Տեղեկություն մասնակիցների գնային առաջարկի մասին՝**

| N | Կազմակերպության անվանումը | Նախահաշվային արժեքը /թվերով տառերով/ | Առաջարկվող գինը /առանց ԱԱՀ/ ՀՀ դրամ | ԱԱՀ | Առաջարկվող գինը /ներառյալ ԱԱՀ/ ՀՀ դրամ |
|---|---|---|---|---|---|
| 1 | <<ՄԱՌՔ>> ՍՊԸ | 1 188 070 /մեկ միլիոն մեկ հարյուր ութսունութ հազար յոթանասուն/ | 1 190 000 /մեկ միլիոն մեկ հարյուր իննսուն հազար/ | 0 /զրո/ | 1 190 000 /մեկ միլիոն մեկ հարյուր իննսուն հազար/ |

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ - 0

**7. Գնահատող հանձնաժողովը որոշեց**

Քանի որ սույն ընթացակարգը կազմակերպվել է <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի դրույթների հիման վրա, և մասնակցի ներկայացրած գնային առաջարկը գերազանցում է սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ծառայությունների գնման հայտով

սահմանված գինը, հետևաբար, համաձայն <<Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին>> ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման հավելված 1-ի 40-րդ կետի 5-րդ մասի բ. ենթակետի կասեցնել հանձնաժողովի նիստը և բանակցություններ վարելու նպատակով նիստ հրավիրել 2021 թ. օգոստոսի 9-ին ժամը 14:00-ին, ՀՀ Գեղարքունիքի մարզ Վարսեր համայնք 7 փ. շ. 11 հասցեում: Բանակցությունների վարման համար ժամանակ սահմանել 30 րոպե:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ - 0

Հանձնաժողովի նախագահ ________________ Ս. Հակոբյան

անդամներ՝ ________________ Հ. Աբրահամյան

________________ Լ. Միսեյան

________________ Ն. Պողոսյան

քարտուղար ՝ ________________ Լ. Արզումանյան